

ՔԱՌԵԱԿՆԵՐ

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

Ա՛խ, սպիտակ սպանդի դէմ Մաշտոց հայր է հարկաւոր,
 Ի սէր ազգի՛ վարդանի պէս զոհուող այր է հարկաւոր,
 Սփիւռքներում, աշխարհով մէկ, Հայոց լեզուի փրկութեան
 Ամէնօրեայ հաղար ու մի Աւարայր է հարկաւոր...

* * *

Երնէ՛կ նրան, ով կը տեսնի վան ամրոցը վերածնուած,
 վերաշինուած աւեր Անին, Զուարթնոցը վերաշինուած,
 Հաղար երնէ՛կ՝ ով կը տեսնի մայր Աբաբաը կամրուելիս՝
 վանայ ծովից մինչև Սեւան՝ ողջ Հայոցը վերածնուած:

* * *

Բանաստեղծներ ինչքան էլ դանձր Շիրազը ուրիշ է, հա,
 Ինչքան էլ ճոխ ծաղկի ներկան՝ իմ երազը ուրիշ է, հա,
 Ա՛խ, ուրիշ է, ազգ իմ, ուրիշ իմ երազի երազը վիհ,
 Հաղար ու մի մայր դետեր կան՝ մայր Արազը ուրիշ է, հա:

* * *

Ազատութիւն, թէ կաս կողքիս, քեզ ինչո՞ւ եմ կարօտում,
 կամ ինչո՞ւ են ազգամուռնէ իմ քնարը քարոտում,
 Դարն ինչո՞ւ է դեռ կախ ընկնում իմ ցուլ երգի եղջիւրից,
 Այնքան քաղցր ես, որ թւում է դու էլ ես քեզ կարօտում:

* * *

Սայեաթ-Նոփան եար մրմնջաց, Շիրազն ևկա՛ սար հառաչեց,
 Որե՞ վիշտն է ծանր, սիրտ իմ, որե՞ ցաւը դար հառաչեց —
 Սակայն որե՞ն բախար դափնի, որե՞ յոյսին կապանք դարբնեց,
 Հներն ասին՝ ազիզ իմ եար, սիրտս Մատիս սար հառաչեց...

Անդէտ, յիմար մարդու համար շիրն ու շաքարը մէկ է,
Հայրենադաւ մարդու աչքին Մասիսն ու սարը մէկ է,
Ի՞նչ իմանայ, որ Մասիսը ողնաշարն է հայ ազգի, —
Հուսկ-կաթնակեր, հողով կոյրին օտարն ու մայրը մէկ է...

* * *

Ես ծաղիկ եմ վշտիս հողում, կանչող չկայ, որ դուրս դամ,
Վրաս դարնան ամպերի պէս՝ լացող չկայ, որ դուրս դամ,
Ծանր է կրծքիս հողը վշտիս՝ դու էլ հողս կոխկրտում...
Ելան կողքիս ծաղիկները, ինձ հող չկայ, որ դուրս դամ:

* * *

Երկու աչք ես դու ինձ տուել, որո՞վ ինդամ, որո՞վ լամ,
Աշխարհն հաղար վշտեր ունի, որո՞վ ինդամ, որո՞վ լամ,
Վշտով Հայոց... Թէ՞ իմ Հայոց կոտորածով դառնայուչ,
Ա՛խ, երկունս էլ, իմ երկուսով քիչ է թեկուզ դարով լամ:

* * *

Իմ սրտի հետ միտք եմ անում, թէ ինչո՞վ եմ բախտաւոր,
Այսքան անխիղճ բաներ տեսայ՝ էլ ինչո՞վ եմ բախտաւոր,
Ա՛խ, նրանով, որ այսքանը իմ սրտի սիրտն է կերել,
Ընկածները վիշտը կիսող իմ խղճով եմ բախտաւոր:

* * *

Ինչքան բարի երազեցի՝ այնքան հետս չար եղան,
Երազներս վշտիս ծովում կորած անվին քար եղան,
Ա՛խ, ինձ թողած՝ իմ վէրքերս, իմ երգերս սիրեցին, —
Սիրածներս զրկէս խլուած, գերուած Մասիս սար եղան:

* * *

Այս աշխարհում մէկ էլ տեսար չսպասածք բանը եղաւ,
Ցաւ կ'ուզէիր չսիրածիդ, բայց սիրածիդ տանը եղաւ, —
Դու էլ մի օր կը ծարաւես՝ ջրհոր փորէ, ա՛խ, ո՛չ թէ հոր՝
Փորածը քո, մէկ էլ տեսար, քո խի գերեզմանը եղաւ...

* * *

Դալար մի շիւ միտք էր անում, թէ վերջն ի՞նչ է դառնալու,
Սուրբ օրօրո՞ց, թէ սեւ դադաղ, թէ ոչինչ է դառնալու,
Բայց թէ պիտի դադաղ դառնայ՝ թող դեռ մանուկ նա մեռնի, —
Ձէ, կեանքն ու մահն ինձ ասում են՝ ամէն ինչ է դառնալու...

* * *

Թափառում են դեռ մտքերս վաչերի պէս Մասիսի,
Ելնում անփերջ Մասիսն ի վեր, քաջերի պէս Մասիսի,
Բայց ի՞նչ անեմ մտքովն, աւա՛ղ, երբ չեմ կննում ես ոտքով,
Պատահողուած է սիրտս դեռ լանջերի պէս Մասիսի...

Ինչքան ասեն Աստուած չկայ՝ աւելի եմ հաւատում,
 Թէեւ չկայ ոչ մի վկայ, բայց էլի եմ հաւատում, —
 Տիեզերքը հիւսող հրաշքն այնքան է վեհ ու դադարեի,
 Այնքան անդուռ, որ աներկբայ վշտով լի եմ հուատում...

* * *

Թուրքը վայ էր... Բայց ո՛վ Հայեր, որ ցրուած էք քար հեռում՝
 Ձեր ողնաշար սէզ Մասիսից հազար ու մի սար հեռում,
 Գիտէ՞ք, որ նոյն կոտորածն է դադութներէ կեանքը ձեր,
 Որ պոկում է ձեր բերանից մեր հայ լեզուն շար հեռում...

* * *

Գերի միայն Մասիսդ չէ, իմ բերրասար, իմ անդին,
 Դու իմ Գրգուռ, դու իմ Սիփան, իմ Ծովասար, իմ անդին,
 Հաղարասար իմ Հայաստան, հազարից մէկդ է արատ,
 Ու հազար է սիրտս դողում մէկիդ համար, իմ անդին:

* * *

Մեծ ու փոքր ազգեր չկան՝ դուր ես ազգած դու մնում,
 Փոքրամարմին մայրեր գիտեմ, որ հսկաներ են ծնում,
 Մեծը նա է, ով լոյս ծնի, ոչ թէ փոքրի լոյս մարէ, —
 Այս լուսեղէն իմ խոհերից լսկ խաւարն է վշտանում...:

* * *

Ես ձեզ Սասուն պիտի տանեմ իմ Անասիման վէրքերով,
 Պիտի Սասնայ սարերն հանեմ ձեզ իմ ցամառն երգերով,
 Այնքան պիտի Սասուն դուռամ, որ մահիկն էլ սասանի,
 Որ դուք Սասունն այս կողմ բերէք Հայոց ցամառն ձեռքերով...:

* * *

Քո ինձ տուած վատութիւնը քեզ խնդութիւն չի բերի,
 Ինչպէս ձմեռն արագիլին հողմերով տուն չի բերի, —
 Ինչպար դարեր նոյնն են կրկնում, թե լաւութիւն արէք միշտ,
 Բայց վատութիւնն հա կայ ու կայ՝ օձը միշտ թոյն կը բերի:

(Շարունակելի)